

ԹԱՄԱՄ ՄԱՄԱՅԻՆ ԱՐՄԱՆՔՆ ՈՒ ԶԱՐՄԱՆՔԸ

Գալենց Մեծ Տանը Թամամ Մաման՝ լուսհոգի Բարնակ աղային կնիկը, հացատուն մտավ հաց առնելու համար: Մշակին առտվան ճաշը պիտի դներ, որպեսզի ուտեր, եզնիքը ախոռեն հաներ, արտը աշնցանի երթար, հացատունն ալ ըսես՝ երեք օր առաջ թոնիրը վառեր, ամսվան մը հացը եփեր էին, անցնելիք, դառնալիք տեղ չկար կախված հացերուն մեջեն:

Թամամ Մաման մինչև ձողերը, կտցանները չգնաց, ամենեն առաջի տարծոցեն յոթ հաց առավ, միասին ունկվրա մը ջուր, ու խոշոր սալայով մը դրսի տունը եկավ, հաշիվը ըրած էր. ամեն առտու Ովակին չորս թերթ կթրջեր, երկուքը՝ տունը ուտելու, երկուքը՝ հետը արտը տանելու: Այդ օրը ան չկար, իր տունը գացեր էր, տեղը հայրը եկեր էր, երկու հացով, կարելի է, չէր կշտանար՝ երեքական ըրավ, մեկ մըն ալ իրմե, ավելի դրավ. թող յոթը ըլլար, ավելի գար, պակաս չգար, ավելին նետելու չէր, հարկավ, խորհելով: Ու մեկ-մեկ ունկվրային վրա բռնեց, ափովը յուրաքանչյուրին երկու երեսը ջուր ցանեց, սալային մեջ իրարու վրա պառկեցուց, վալայով ալ ծածկեց, որ կակուղնային:

Պապուճանը՝ Ովակին հայրը, որուն մագն ու մորուքը երկնցեր էին, տարին անգամ մը՝ Զատկե Զատիկ ածիլվելուն, կապերտով տոշկված հողատախտին վրա նստեր էր, Թամամ Մամային կնայեր, որ մեծածավալ լաչակով գլխով ու կարճ հասակովը կերթար-կուգար, սեղան կպատրաստեր իրեն: Նախ՝ աթոռակով սինին բերավ ու հաստատեց առաջքը, հետո հացին սալան մոտեցուց: Հացերը կակուղցեր էին, երեք հատ հանեց, երկնցուց սինիին վրա: Ետեն, ինչպես ամեն առտու կըներ, պղնձե ափսե մը առավ, մառան մտավ, նոր բացված կճիկին մեջ գդալը կոխեց, շատ ըլլա՝ քիչ չըլլա՝ ըսելով, ուրուպով մինչև ալ չառնելու աստիճան լեցուց ամանը ու սինին բերավ: Երկրորդ ափսե մը առավ, այս անգամ ամենեն խորունկներեն, ապուրիններեն, ու, ինչպես բոլոր պղնձեղեններուն ասոր վրա ալ «Գալենց Բարնակ» փորագրված, թթվոց մտավ: Ամեն տեսակեն խառն թթուին բոլակին գլուխը անցավ, տուր կոխեց մեջը, մինչև շրթերը լեցուց լոլիկով, տախտեղով, ազատքեղով, ստեպղինով ու, նույնպես, սինին բերավ: Պանիրին բոլակեն չորս մեծկակ լեսպ պանիր հանեց, չորս գլուխ ալ չոր սոխ, ատոնք ալ բերավ ու, ամենեն վերջը, մեծփոր լոշիկով մը պզպզուն ջուր դրավ.

– Հրամմե, դուն կեր, Պապուճան աղբար, – ըսավ: Հետո, ավելցուց.

– Դուն մինչև փորդ կշտացնես, ես երթամ ախոռը, գոմը ավլեմ, աղբերը աղբընոցը տանիմ ու գամ: Առտուն կանուխ, հարս-աղջիկ, ամենքը ճերմակ Քարտակի էգին դրկեցի, տունը մինակ ես եմ:

Ու ախոռին կողմը գնաց: Բացի երկու եզներեն, ոչխար-ըռզակ՝ արոտ գացեր էին, դռները բաց ձգեր էին, թե ախոռներուն, թե երկու բակերուն ներսը, դուրսը գիշերվան մեզերով, աղբերով ծածկված էին: Թամամ Մաման ցախավելով ամեն կողմ ավրլեց: Այծի սև սպլտուր մը անգամ չթողուց

աղքաբերուն տակը, նորեն աղ ցանեց անոնց վրա, որ իրիկունը դարձին գան ու լգեն, մսուրներուն կերերեն ավելցածները, հողը, խիճերը թափեց, մաքրեց, չոր աղբը թացեն զատեց, մսուրներուն ներքև տվավ, զիշերը նորեն փռելու համար, որպեսզի սալարկված կարծր հատակին վրա չնստին ու որոճան, մեզերուն թացությունը չորցուց, հետո ալ ավելածները կողով-կողով շալկեց, գեղեզերքի իրենց աղբնոցը տարավ ու պարպեց:

Պապուճանը, մինակ մնալով, նայեցավ սինիին վրա իր առաջքը դրվածներուն: Տանձին կայի՞ն ասոնք: Ատտուն, շատ-շատ կորկոտե խոշուք ապուր մը պիտի դնեին, որ ուտեր ու երթար: Ամենեն առաջ սա ափսեին ուրուպը, որուն, ինչպես գիտեք, նոր եփվածը սև ու ջրուտ կըլլա, ամիսներու ընթացքին է, որ կղեղնի, կթանձրանա, կշաքարոտի, Թամամ Մամային բերածը հեղվա դարձեր էր, ուր է՝ շաքարով, յուղով այլուրե, հեղվա կշինեն, ան հեղվան, կամ՝ հեղվա ալ չըսեմ, մեղր ըսեմ, ո՞ր մեղրը, ուր է՝ բջիջներեն կպարպվի, առանց չեչի, առանց մեղրամոմի, զուտ, մեղրը կմնա, աղ մեղրը դարձեր էր: Իր գյուղը ուրուպ կա՞ր: Թուր կա՞ր, թթենի կա՞ր, որ ուրուպ ըլլար: Ըլլար նույնիսկ, ո՞վ պիտի շահանցըներ, Տանձեցոնց կնիկները: Հա տանձեցոնց կնիկները, հա բոշայի կնիկները. անոնց պես կարմիր, փոշեցանով կետկիտված երեսներով, կարելի է եթե անոնցմե ալ են՝ ո՞վ գիտե: Անոնք աղվոր պտուկ շինել գիտեն, իրենց գյուղի սևորակ հողն ալ մեկ հատիկ է ատոր համար, ինչպես թեղուտոնց կնիկները իրենց կարմիր հողովը կուծ, բոլակ, պոկավոր կշինեն: Անոնց շինած պտուկներուն մեջ, մենք՝ հերիսա կըսենք, դուք քեշկեկ կըսեք, մենք խաշ կըսենք, դուք՝ փաչա կըսեք, ո՞վ թոնիր վառեր, հաց եփեր է, կտանինք, ակիշներով երկու ունկերեն մեջը կիջեցնենք, խուփերով կխփենք, թոնիրին վրա ալ կծածկենք, մինչև առտու կեփին: Եթե թոնիրը եփված հերիսա կամ խաշ կերած չեք, չեք կրնար գիտնալ ինչպե՞ս համով, հոտով կըլլան:

Թթու ունի՞ն: Այն աղով դրվածները, այն աղիտախղեղի, տոլտախղեղի թթուները, որ քանի բերանդ այրեն՝ ուֆ, ուֆ կըսես, հետը կոփվ ընելու պես՝ նորեն կուտես. կամ՝ լոլիկի, կաղամբի, ստեպղինի թթուները: Տուներուն կիցը ածուք՝ բանջարանոց չունեին, որ բանջարեղեն մշակեին: Ունեցածնին՝ արտերուն մեկ ծայրը, քանի մը տուներու իբր թե տասը տասնհինգ կաղամբները կերևան, ատոնք են, հաստ, կապույտ տերևներով սև կաղամբ ըսված տեսակեն են, կորկոտի, ձավարի հետ եփելով՝ ապուր կընեն, կգոլեն: Թամամ Մամային շինած, կաղամբի թթուն՝ ճերմակ-ճերմակ տերևներով, տանձեցիք իրենց կյանքին մեջ տեսած ունի՞ն: Անոր ջուրը միայն ըլլա ու խմես՝ կբավե. ինչպես ներսիդիդ կբացվի, կոզկոռվիս: Հապա ապուրի ուսկուռա թասով բերած տախդեղով, լոլիկով, ստեպղինով խառն թթուն: Անոր կարմիր նոնագույն, գինեգույն ջուրին մեջ, հացդ թաթխես, աղ հացը ուտես, հետը տախդեղ մը, ստեպղին մը, վրայեն ալ ջուրը խմես, դեղը ի՞նչ պիտի ընես, դեղը աս է, համադեղ է: Բոլորտիքի գյուղերեն այլազգի կնիկները կուգան, աման-աման կտանին իրենց հիվանդներուն. «Խեսթե իչին, իչի յանիյոր»* ըսելով, «Օ ճանը իսոթ

խաթիյոր»** (տախդեղին, այսինքն՝ պղպեղին, իսոթ կըսեն), «ճանը լուիկ իսթիյոր» (անոնք ալ լուիկ կըսեն լուիկին)... «ճանը մաղտանոս, բեզիկ, փիռչիքլի իսթիյոր» (ճակնդեղին՝ բեզիկ, ստեպդինին՝ փիռչիքլի կըսեն) . . . ամեն խնդրանքի ալ՝ «Էռլուլերիզին ճանը իչին»*** կավելցնեն: Ետքն ալ կագան, կավետեն. «Իսոթը, յետի, փիռչիքլի յետի, սույունու տա վերտիք, իչտի, կյոզունու աչտը, օյլե, էյի օլտու քի, չոխ, չոխ չեք տուա Էթթի սիգե»****:

Պապուճանը, չեք գիտեր՝ ինտոր կերավ Թամամ Մամային բերած ճաշը Ուրուպեն սկսավ: Կերավ ու կերավ: Մեկ մը, մեկ մըն ալ, մեկ մը, մեկ մըն ալ: Թունդ անուշը այրեց ներսը, հոգին թթունն ուզեց: Հացը թաթխեց ջուրը, ստեպդինով մը, դեղին տախդեղով մը կերավ: Կծու էր: Ավելի լավ: Թող կծու ըլլար: Զգոհացավ: Նորեն հաց մը թաթխեց ջուրը: Հոգին լուիկ մը ուզեց: Լման լուիկ մը: Թաղեց բերնին մեջ, ակոսներով սեղմեց, լուիկին ջուրը մըմուռ-մըմուռ պարպւեցավ, լեցուն, զովացուց բերանը, հոգին նորեն ուրուպեն ուզեց: Հացով վերսկսավ ուտել: Մեկ մը, մեկ մըն ալ: Առջնի երեք հացերը հատան: Սալայեն, հետը արտը տանելիք հացերեն՝ չորրորդն ալ հատցուց: Ափսեին ուրուպն ալ հատնելու մոտ էր: Բայց ներսը նորեն այրեց: Հոգին սոխ մը ուզեց: Նախ միջուկը, ծիւր կերավ, չգոհացավ, ամբողջը կերավ հացով: Հացը թթուին ջուրը կոխեց, հացը լիպիկցավ. ստեպդին մը կերավ հետը, երկրորդ մըն ալ, տախդեղ մը կերավ, երկրորդ մըն ալ, փունջ մը ազատքեղեն կերավ, երկրորդ մըն ևս: Հետը տանելիք սալային հինգերորդ հացին սկսավ: Ուրուպի վերջին մնացորդն ալ հացով սրբեց ու կերավ: Հոգին ջուր ուզեց: Լոշիկը վերցուց բերնին: Խմեց, կես ըրավ ջուրը: Ներսը զովացավ: Հոգին պանիր ուզեց, պանիրին դարձավ: Սոխով միասին կերավ: Դեռ սալան երկու լման հաց կար, կես հաց մը, կեսի մըն ալ կեսը: Երեք լեսպ պանիր, երեք հատ ալ սոխ: Շարունակեց հացով միասին սոխ ու պանիրը ուտել: Պանիրը աղի էր, թող աղի ըլլար: Սոխը կծու էր, թող կծու ըլլար: Ավելի գրգռեցին ախորժակը: Հացին կտորը, հետո, կես մը կար ան, հետո վեցերորդ հացը երկու լեսպ պանիրին հետ կերավ: Արտը հետը տանելիքներեն վերջին սոխ մը, վերջին լեսպ մը պանիրը, վերջին լման հաց մը, թթուին մեջ տախդեղ մը, լուիկ մը մնացին: Անոնք ալ կերավ. թթուին ջուրեն քչիկ մը մնացեր էր, ան ալ բերնին վերցուց, լոշիկը դեռ ջուր կար, ան ալ խմեց, հատցուց: Ու ոտքի ելավ, ախոռ գնաց, եզները դուրս հանելու:

Թամամ Մաման ալ ախոռներեն տուն մտավ սինին վերցնելու, ճաշին ավելնալիք սոխը, հացերը, պանիրը, արտը տանելիք տոպրակը դնելու, Պապուճանին տալու, որ հետը տաներ:

Ու արմնցավ, զարմնցավ, կայնած մնաց: Սինին, հացին սալան պարապ էին: Յոթը լման հացեն՝ հաց չկար, չորս լեսպ պանիրեն պանիր չկար, չորս գլուխ սոխեն սոխ չկար:

– Մրիկ... ամենքը կերեր է, – ըսավ յուրովի, ու չհավատաց, հավատալը չեկավ:

Բակը գնաց որ Պապուճանը, ասորի տերտերի մը պէս՝ մագով-մոքուքով, երկայն մաստան ձեռքը, եզները դուրս հաներ էր, կսպասեր.

– Ի՞նչ ըրիր, Պապուճան աղբար, ամենքը կերա՞ր, – հարցուց:

– Կերա, ամենքը կերա, – պատասխանեց, կերի սպասող դահ եզի մը քովնտի նայվածքով իրեն նայելով:

Ի՞նչ ըսեր:

– Քանի՞ հաց դնեմ հետո արտ տանելու, երեք հացը կօգտե՞, հերի՞ք է:

– Չորս հաց մը դիր, դուն գիտես, – ըսավ:

– Պանիր, սոխ քանի՞ հատ դնեմ:

– Երեք լեւպ պանիր, երեք հատ ալ սոխ, – ըսավ:

* Հիվանդի համար ներսը այրվում է (թուրք բարբառ)

**Նրա սիրտը պղպեղ է ուզում:

***Ձեր մահացածների հոգու համար:

****Պղպեղը կերավ, գազարը կերավ, ջուրն էլ տվեցինք՝ խմեց, աչքը բացեց այնպես լավացավ...
որ շատ, շատ աղոթեց ձեր համար